



Արմավիրի զարգացման  
կենտրոն

# Աշակերտների իրավունքների պաշտպանությունն Արմավիրի դպրոցներում

Մոնիտորինգի արդյունքների զեկուլյց

Արմավիր 2012

# Բովանդակություն

Ներածություն	3
Մեթոդաբանություն	3
Օրենսդրության վերլուծություն	4
Սոցիոտոնիզի արդյունքները	4
Տնօրենների հետ անցկացված հարցազրույցներ	7
Ուսուցիչների հետ անցկացված հարցումներ	8
Աշակերտների հետ անցկացված հարցումներ	12
Ծնողների հետ անցկացված հարցումներ	18
Հիմնական արդյունքների ամփոփում	19
Եզրակացություն	23
Առաջարկություններ	23
Հավելված	24

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և ԱՄՆ բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ ՄՁԳ No AID -111-LA-10-00001 համագործակցության պայմանագրի DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտած տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ ՄՁԳ և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

## Ներածություն

Մի շարք միջազգային և ներպետական օրենքներով սահմանված երեխաների իրավունքները հաճախ չեն գործում, և աշակերտները ենթարկվում են տարատեսակ բռնությունների: Ըստ կրթության և գիտության նախարարության մշակած դպրոցների օրինակելի կանոնադրության 6-րդ գլխի 75-րդ կետի՝ արգելվում է աշակերտների նկատմամբ հոգեբանական և ֆիզիկական բռնություն գործադրելը:

«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը ներգրավված է Հայաստանում աշակերտների նկատմամբ հոգեբանական և ֆիզիկական բռնության և ճնշման դեմ պայքարում: Ուստի կազմակերպությանն անհրաժեշտ է վստահելի տեղեկատվություն մարզում առկա իրավիճակի մասին՝ աշակերտների նկատմամբ բռնությունների կանխման միջոցառումներ ձեռնարկելու համար: Այդ սոցիալական խնդիրը քողարկված է և թերի է ուսումնասիրված Արմավիրի մարզում: Համագործակցելով և ֆինանսավորվելով Քաունթերփաթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության հետ՝ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն Արմավիրի մարզի տասնմեկ քաղաքային դպրոցներում իրականացրել է մոնիտորինգ: Մոնիտորինգի ռազմավարական նպատակն է նպաստել Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում բռնության կանխարգելմանը:

## Մեթոդաբանություն

Մոնիտորինգն անցկացվել է սոցիոլոգիական քանակական և որակական մեթոդների համակցմամբ: Այն իր մեջ ներառել է երեք հիմնական մեթոդների համակցումը. օրենսդրության վերլուծություն, դիտարկում, հարցումներ:

**Օրենսդրական վերլուծություն** իր մեջ ներառում է միջազգային տարբեր կոնվենցիաների և հռչակագրերի վերլուծությունը, ինչպես նաև ներպետական տարբեր օրենքների, ենթօրենսդրական ակտերի, հրամանների վերլուծությունը:

**Դիտարկում** անցկացվել է պարզ և ուղղակի դիտարկման մեթոդով, որի արդյունքները թույլ են տալիս վերստուգել այլ մեթոդների միջոցով ձեռք բերված պատասխանները: Մոնիտորինգի խմբի կողմից օգտագործվել են հատուկ մշակված դիտարկման քարտեր, որոնք բացահայտում են դպրոցներում տիրող իրավիճակը բավական մանրամասնությամբ՝ սկսած աշակերտի՝ կրթական գործընթացի համար անհրաժեշտ պայմաններից, սանիտարական կանոնների պահպանումից, (սահմանված ՀՀ Առողջապահության նախարարի N82 «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» N2.III.4.2 Սանիտարական կանոնները հաստատելու մասին հրամանով) մինչև աշակերտի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ պատասխանների առկայությունը, բողոքների և առաջարկների արկղերի առկայությունը:

**Հարցումներ** անցկացվել են աշակերտների, ուսուցիչների, տնօրենների և ծնողների հետ: Աշակերտների, տնօրենների և ուսուցիչների հետ անցկացվել են ստանդարտացված հարցազրույցներ, իսկ ծնողների հետ անցկացվել են ֆոկուս խմբեր: Յուրաքանչյուր դպրոցում հարցման են ենթարկվել 7-11-րդ դասարանների 20-ական աշակերտներ և նույնքան ուսուցիչներ, ինչպես նաև կազմակերպվել են 1-ական ֆոկուս խմբային քննարկումներ, որոնց, ընդհանուր թվով, մասնակցել են 108 ծնող:

Ընդհանուր հաշվով 2011թ. դեկտեմբեր ամսվանից մինչև 2012թ. փետրվար ամիսը հարցման են ենթարկվել 220 աշակերտներ, 220 ուսուցիչներ, 108 ծնողներ և 11 դպրոցների տնօրեններ: Ստանդարտացված հարցումներն անցկացվել են

պատահական սկզբունքով: Մոնիտորնգն անցկացվել է Արմավիրի թիվ 1, 2, 4, 5 և 6 դպրոցներում, Վաղարշապատի թիվ 1, 2, 3, 4 և 5 դպրոցներում, քանի որ վերջիններս համարվում են մարզի խոշոր քաղաքները, իսկ Մեծամոր քաղաքի միայն մեկ՝ թիվ 2 դպրոցում: Ըստ անհրաժեշտության՝ որակական տվյալները կողավորվել են, և բոլոր տվյալները մուտքագրվել են SPSS (վիճակագրական փաթեթ հասարակական ուսումնասիրությունների համար) վերլուծության համար:

## **Օրենսդրության վերլուծություն.**

Մի շարք միջազգային և ներպետական օրենքներ, ինչպես օրինակ՝ Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, մասնակից պետությունների վրա դրել է պարտականություն, որ նրանք ձեռնարկեն լուրջ անհրաժեշտ միջոցները խտրականության ձևերից կամ պատժից երեխային պաշտպանելու նպատակով: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը ևս մասնակից պետությունների վրա դրել է մավականին մեծ ծավալով պարտականություններ երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

Ներպետական օրենսդրությունը ևս, հենվելով այս կոնվենցիայի դրույթների վրա, սահմանել է երեխաների իրավունքները և մի շարք պարտականություններ պետության համար:

Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 16-րդ հոդվածով նախատեսվում է, որ «Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի կյանքի, մնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիության կամայական կամ ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ապօրինի ոտնձգության»: Նման միջամտությունների դեպքում նա ունի պաշտպանության իրավունք, որը նաև Սահմանադրության դրույթ է (հոդված 14), ուստիև ունի լիարժեք իրավաբանական ուժ: Այս դրույթը կարելի է հանդիպել նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում, որը լիարժեք ֆիզիկական լիարժեքներից նաև պաշտպանում է երեխայի պատիվն ու արժանապատվությունը և նշում, որ ցանկացած անձ, ծնող, օրինական ներկայացուցիչ, ուսումնադաստիարակչական հաստատություններում աշխատողներ և այլք այն խախտելու դեպքում պատասխանատվության կենթարկվեն համապատասխան օրենքներով:

Ըստ ՄԱԿ-ի կոնվենցիայի 19-րդ հոդվածի՝ մասնակից պետությունները պարտավոր են քայլեր ձեռնարկել երեխաներին ֆիզիկական, հոգեկան լիարժեքներից, վիրավորանքից, չարաշահումներից (ներառյալ՝ սեռական չարաշահումներ) և այլ լիարժեքներից պաշտպանելու համար, անկախ այն հանգամանքից, թե դա ունի կողմից է կատարվել: Տարբեր օրենքներում հանդիպող հետևյալ սկզբունքն ամրագրված է ՄԱԿ-ի կոնվենցիայի 37-րդ հոդվածում. «Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Իսկ 39-րդ հոդվածը պարտադրում է պետություններին անհրաժեշտության դեպքում ձեռնարկել համապատասխան քայլեր դաժան վերաբերմունքի, շահագործման, չարաշահման, խոշտանգման, նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի զրկ գնացած երեխաների ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնման համար: Եվ

վերականգնումն ու վերաինտեգրումը պետք է իրականացվեն երեխայի առողջությունը, ինքնահարգանքը և արժանապատվությունն ապահովող պայմաններում:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածը սահմանում է, որ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Ըստ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ պետությունը, իր համապատասխան լիազորված մարմիններով, իրականացնում է երեխայի իրավունքների պաշտպանությունը: Սույն օրենքում տեղ գտած կարևորագույն սկզբունքներից մեկը սահմանված է 4-րդ հոդվածով, ըստ որի՝ «Երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, մակարդակի վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից»: Սա մխում է ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածից, ըստ որի բոլորը հավասար են օրենքի առաջ անկախ որևէ հանգամանքից:

Ինչ վերաբերում է կրթության իրավունքին, ապա «Կրթության մասին» ՀՀ օրենքն անդրադառնում է դրան և դրա պետական երաշխիքներին 6-րդ հոդվածի 1-ին կետով.

*Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից:*

Անդրադառնանք լսողություններին ըստ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի.

*Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակ՝ ֆիզիկական, հոգեկան և այլ լսողությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել լսողության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի: Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:*

*Պետությունը և նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած լսողությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավելուց, մուրազկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների օրինական շահերի այլ ոտնահարումից:*

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը սահմանել է հետևյալը՝

*Վարքի շեղում ունեցող անչափահասների ուսուցումը և վերադաստիարակումն իրականացնում են հանրակրթական դպրոցները՝ հաշվի առնելով սովորողների հոգեբանական առանձնահատկությունները:*

Ինչ վերաբերում է լսողությունների առկայության դեպքում պատժելիությանը, ապա դրանք սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքում: Օրինակ՝ անձի առողջությանը վնաս պատճառելու հետ կապված քրեական օրենսգրքում կան մի քանի հոդվածներ՝ 112, 113, 117, որոնք նախատեսում են համապատասխան պատիժներ:

112-րդ հոդվածով՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար նախատեսվում է պատիժ ազատազրկման ձևով 3-7 տարի ժամկետով՝ նկարագրելով դրանից առաջացող հավանական հետևանքները: Ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում նախատեսված է 5-10 տարի ազատազրկում: Ծեծելը կամ այլ

սննդի գործողություններ կատարելը, որը չի առաջացրել քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, պատժվում է քրեական օրենսգրքով նախատեսված ձևով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով (հոդված 118):

Իսկ 119-րդ հոդվածով սահմանվում է պատիժ խոշտանգման համար, ըստ որի խոշտանգումը ցանկացած այնպիսի գործողություն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքներ, և պատժվում է ազատազրկմամբ առավելագույնը 3 տարի ժամկետով, իսկ ծանրացուցիչ հանգամանքներում՝ 3-7 տարի ժամկետով:

## **Սոնիտորինգի արդյունքները.**

Այս բաժնում ընդհանրացվել է դպրոցներում տիրող ընդհանուր իրավիճակը՝ ներառյալ աշակերտի՝ կրթական գործընթացի համար անհրաժեշտ պայմանները, սանիտարական կանոնների պահպանումը, աշակերտի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ պաստառների առկայությունը, բողոքների և առաջարկների արկղերի առկայությունը:

Դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ դպրոցներում աշակերտների կրթական գործընթացի համար անհրաժեշտ հիմնական պայմաններն առկա են՝ կապված շենքային և դասասենյակային պայմանների հետ: Ուսումնասիրված 11 դպրոցներից 5-ի նախասրահներում առկա են իրավունքի անկյուններ, սակայն ոչ մի դպրոցի նախասրահում չկան տեղադրված առաջարկությունների և բողոքների արկղեր:

Դասասենյակները հիմնականում ապահովված են գույքային ճիշտ տեղակայմամբ՝ կապված լուսավորության հետ և շարքերի միջև, ինչպես նաև գրատախտակից նստարանների միջև եղած տարածության նորմայի համապատասխանության հետ:

Դասարանների ընդհանուր մաքրությունը դիտարկումն անցկացնելու պահին գնահատվել է հիմնականում բավարար, սակայն պարզվել է նաև, որ դպրոցներից մեծամասնությունում դասասենյակները մաքրվում են աշակերտների կողմից, ինչը դժգոհություն է առաջացնում աշակերտների և ծնողների մոտ:

Դիտարկված դասասենյակներում բացակայում են աշակերտների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ պաստառներ, սակայն գրեթե բոլոր դասասենյակներում առկա են եղել դասացուցակներ:

Ինչ վերաբերում է մարզադահլիճներին, ապա դրանք առկա են բոլոր դպրոցներում, որոնք հիմնականում գործում են և ջեռուցվում, սակայն ոչ բոլոր մարզադահլիճներին կից կան հագուստի կախիչներով հանդերձարաններ, ինչը համարվում է պարտադիր պայման:

Բուժետներ նույնպես կան դիտարկված բոլոր դպրոցներում, որոնցում կազմակերպվում է սննդամթերքի և հյութերի վաճառք միայն և ոչ թե ընդհանուր սնուցում ու ճաշ աշակերտների համար:

Դպրոցներից միայն 3-ի բակում կան գործող ցայտաղբյուրներ, որոնցից կարողանում են օգտվել աշակերտները, իսկ մյուսներում աշակերտները ծարավը հագեցնում են

տարբեր եղանակներով, ինչպիսիք են՝ սանհանգույցից օգտվելը, ջուր գնելը կամ տանից բերելը կամ այլ բակերից օգտվելը:

Բոլոր դպրոցներում առկա են համակարգչային սենյակներ, որոնք հագեցած են անհրաժեշտ հիմնական սարքավորումներով: Ընդ որում, որոշ դպրոցներում դրանք աշակերտների համար ազատ են և նրանք կարող են օգտվել, երբ ցանկանան:

Բժշկական կետեր նույնպես առկա են բոլոր դպրոցներում, որոնք գործում են և ջեռուցվում, սակայն հագեցած են միայն նվազագույն բժշկական սարքավորումներով ու գույքով:

Իսկ ինչ վերաբերում է սանիտարական հանգույցներին, ապա այստեղ ամենաքիչն են պահպանված հաստատված կանոնները: Այսպես, դրանցում առկա զուգարանակոնքերի և լվացարանների թիվը չի համապատասխանում դպրոցներում սովորող աղջիկների և տղաների թվին, այս թիվը հիմնականում պահպանված չէ, ինչպես նաև սան.հանգույցների մեծամասնությունն ապահովված չէ հոսող ջրով, որը նույնպես հակասում է սահմանված նորմերին: Ոչ բոլոր դպրոցների սան.հանգույցների դռներն են փակվում, իսկ դրանց մաքրությունը դիտարկման պահին գնահատվել է բավարար:

Ընդհանրացնելով վերոնշյալ դիտարկումների արդյունքները՝ պետք է նշել, որ Արմավիրի մարզի դիտարկված 11 քաղաքային դպրոցները հիմնականում ապահովված են աշակերտների կրթական գործընթացի համար անհրաժեշտ պայմաններով ու գույքով:

## **Տնօրենների հետ անցկացված հարցազրույցներ**

Հարցման են ենթարկվել ընտրված 11 դպրոցների տնօրենները, որոնք աշակերտների ընդհանուր կարգապահությունը դպրոցում գնահատել են լավ: Նրանք հաճախ ստիպված չեն լինում պատժել աշակերտներին, սակայն երբեմն ստիպված են լինում: Ուսուցիչները նույնպես երբեմն ստիպված են լինում պատժել աշակերտներին, ինչպես նշում են տնօրենները: Պարզվում է, որ դպրոցի բոլոր տնօրենները դեմ են բռնի պատժամիջոցների կիրառմանը, նրանք, որպես պատժամիջոց, կիրառում են ծնողների հետ հանդիպումները, աշակերտների հետ խրատական զրույցները, դիտողությունը և այլն: Նույն պատժամիջոցներն են կիրառում նաև իրենց դպրոցների ուսուցիչները՝ դասղեկի միջամտություն, ծնողի իրազեկում, նախատինք, դիտողություն, երբեմն նաև՝ անբավարար գնահատական: Սակայն, ինչպես կներկայացվի ստորև աշակերտների նկատմամբ պատժամիջոցները դպրոցներում չեն սահմանափակվում միայն տնօրենների կողմից նշված պատժամիջոցներով, դրանցում առկա են լինում նաև ֆիզիկական բռնությունների տարրեր:

Ըստ դպրոցների տնօրենների աշակերտների ծնողները չեն բողոքում իրենց երեխաների նկատմամբ կիրառված պատժամիջոցների առթիվ: Աշակերտների և ուսուցիչների միջև խնդիրներ կամ կոնֆլիկտներ, ըստ տնօրենների, հազվադեպ են պատահում:

Տնօրենները կարծում են, որ աշակերտները հիմնականում տեղյակ են իրենց իրավունքներին ու պարտականություններին, իսկ ուսուցիչներն անխտիր ծանոթ են իրենց իրավունքներին ու պարտականություններին:

Բոլոր դպրոցներում գործում են աշակերտական խորհուրդներ, ինչը վկայեցին նաև աշակերտներն իրենց հետ անցկացված հարցումների ընթացքում: Ըստ տնօրենների դպրոցներում կան նաև իրավունքի անկյուններ, սակայն, դիտարկումների բաժնում արդեն նշվեց, որ դրանք առկա են եղել 11 դպրոցներից միայն 6-ում: Միայն մեկ դպրոցի տնօրենն նշեց, որ իրենց դպրոցում չկա իրավունքի անկյուն, սակայն կցանկանար նմանատիպ անկյուն ունենալ դպրոցում, և հարցադրումը հանդիսացավ միտք, որպեսզի իրականացվի իրավունքի անկյան տեղակայումը նաև այդ դպրոցում:

Այսպիսով, ինչպես վկայում են դիտարկված դպրոցների տնօրենները դպրոցներում առհասարակ բացակայում են բռնությունների կիրառումը աշակերտների նկատմամբ, դպրոցներում կրթական գործընթացը կազմակերպվում է ժողովրդավարական սկզբունքների համաձայն, իսկ աշակերտներն ու ուսուցիչները գիտեն իրենց իրավունքներն ու պարտականությունները:

## **Ուսուցիչների հետ անցկացված հարցումներ**

Հարցման ենթարկված 220 ուսուցիչների 49 տոկոսը աշակերտների ընդհանուր կարգապահությունը գնահատել է բավարար, նրանց 45 տոկոսն է այն գնահատել լավ, իսկ 2-ական տոկոսներ աշակերտների կարգապահությունը դպրոցում գնահատել է «գերազանց» ու «անբավարար» և ևս 2 տոկոսը դժվարացել է պատասխանել հարցին:

Այն հարցին, թե ինչ հաճախականությամբ են խնդիրներ առաջանում իրենց՝ ուսուցիչների և աշակերտների միջև, հարցված ուսուցիչների 58 տոկոսը պատասխանել է, որ հազվադեպ են խնդիրներ առաջանում իրենց և աշակերտների միջև, իսկ նրանց 29 տոկոսն ասել է, որ երբեք խնդիրներ չեն առաջանում:

Այնուհետև փորձ է արվել պարզելու, թե ուսուցիչները հաճախ են ստիպված լինում պատժել աշակերտներին: Այս հարցի պատասխանները բաշվեցին հետևյալ կերպ.

- Այո -0 տոկոս,
- Երբեմն-43 տոկոս,
- Ոչ-57 տոկոս:


Այսինքն, ուսուցիչների մեծամասնությունը հաճախ ստիպված չի լինում պատժել աշակերտներին: Սակայն հաջորդ հարցում շատ ակնհայտ բացահայտվում է ընդհանուր առմամբ ուսուցիչների կողմից աշակերտներին պատժի ենթարկելու հաճախականությունը, քանի որ հարցվող ուսուցիչներին հարց էր տրված, թե իրենց գործընկերները հաճախ են ստիպված լինում պատժել աշակերտներին: Ահա այս հարցի պատասխանները.

- Այո -7 տոկոս,
- Երբեմն-73 տոկոս
- Ոչ-20 տոկոս:

Իսկ թե ինչ պատժամիջոցներ են կիրառում հարցված ուսուցիչները, երևում է գծապատկեր 1-ում.




**Գծապատկեր 1. Հարցված ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ կիրառվող պատժամիջոցները (%)**



Հարցված ուսուցիչներին հնարավորություն էր տրվել ընտրել բոլոր հնարավոր տարբերակները, ուստի տարբերակների տոկոսային արժեքների գումարը մեծ է 100-ից:

Քանի որ ավելի հեշտ է դիտարկել և պատասխանել այլ ուսուցիչների գործողություններն աշակերտներին պատժելիս, ապա հարց տրվեց հարցվող ուսուցիչներին, թե ինչ պատժամիջոցներ են կիրառում աշակերտների նկատմամբ իրենց գործընկեր ուսուցիչները: Այս դեպքում պատժամիջոցները դասակարգվեցին հետևյալ կերպ.

**Գծապատկեր 2. Հարցված ուսուցիչների տեսակետից այլ ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ կիրառվող պատժամիջոցները (%)**



Ինչպես երևում է գծապատկերից, այստեղ արդեն առկա են և՛ հոգեբանական, և՛ ֆիզիկական բռնության դրսևորումներ:

Հարցված ուսուցիչների պատասխաններից պարզ դարձավ, որ աշակերտների ծնողների 68 տոկոսն այս կամ այն պերպ տեղեկանում են իրենց երեխաների նկատմամբ կիրառված պատիժների մասին, իսկ նրանց 5 տոկոսը չի իմանում: Որպես տեղեկացված աղբյուր՝ ծնողներն ավելի շատ պատիժների մասին իմանում են դաստեղից (60 տոկոս):

Սակայն, իմանալով հանդերձ, ըստ ուսուցիչների 43 տոկոսի աշակերտների ծնողները չեն բողոքում այդ փաստի առթիվ, իսկ 35 տոկոսն՝ ավելի շուտ չի բողոքում, այսինքն՝ ընդհանուր առմամբ ծնողները չեն բողոքում իրենց երեխաների նկատմամբ կիրառված պատիժների համար:


Իսկ այն հարցին, թե ընդհանրապես աշակերտների կամ ծնողների կողմից եղել են բողոքներ բռնությունների վերաբերյալ, ուսուցիչները պատասխանեցին հետևյալ կերպ.

- Այո-4 տոկոս,
- Երբեմն-14 տոկոս,
- Ոչ-64 տոկոս,
- Չգիտեմ-18 տոկոս:

Այսպիսով, ընդհանուր առմամբ ուսուցիչների կողմից դրական է ներկայացվում հանրակրթական դպրոցներում առկա աշակերտների իրավունքների պաշտպանան և մասնավորապես բռնությունների վերաբերյալ տիրող իրավիճակը, ինչը բավականին հակասում է աշակերտների կողմից արտահայտած տեսակետներին, որոնք կներկայացվեն ստորև:

Ուսուցիչներից հետաքրքիր էր իմանալ նաև, թե ըստ իրենց աշակերտները որքանով գիտեն իրանց իրավունքներն ու պարտականությունները: Նրանց տեղեկացվածության աստիճանն ըստ ուսուցիչների արտացոլում է գծապատկեր 3-ը.

**Գծապատկեր 3. Ըստ ուսուցիչների աշակերտները ծանոթ են իրենց իրավունքներին ու պարտականություններին (%)**



Ըստ գծապատկերի ուսուցիչները կարծում են, որ աշակերտներն առավել շատ ծանոթ են իրենց իրավունքներին և ոչ թե պարտականություններին:

Ուսուցիչներին հարց էր ուղղված նաև գնահատել ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների բարելավման միջոցների արդյունավետությունը 1-ից (ամենից քիչ արդյունավետ) մինչև 5 (ամենաարդյունավետ) սանդղակի օգնությամբ:

Հարցված ուսուցիչների գնահատականները դասակարգված են ըստ նվազման կարգի.

- յուրաքանչյուրը՝ և՛ աշակերտը, և՛ ուսուցիչն իմանա իր իրավունքներն ու պարտականությունները (միջինը=4,1),
- վարքագծի կանոնների մշակում և ներդրում (միջինը=3,6),
- աշակերտների կրթական մակարդակի բարձրացում (միջինը=3,4),
- ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների կանոնակարգի մշակում և ներդրում (միջինը=3,1):

Որպես այլ արդյունավետ միջոցներ ուսուցիչ-աշակերտների փոխհարաբերությունների բարելավման համար ուսուցիչների կողմից նշվել է նաև հոգեբանի առկայությունը դպրոցներում և խորհրդային դպրոցից օրինակ վերցնելը:

## Աշակերտների հետ անցկացված հարցումներ

Մարզի 11 դպրոցներում հարցման են ենթարկվել 220 աշակերտներ, որոնց 39 տոկոսը եղել են արական, իսկ 61 տոկոսը՝ իգական սեռի ներկայացուցիչներ: Հարցման ենթարկված 7-12-րդ դասարանների աշակերտների 53 տոկոսն իրեն լավ է զգում դպրոցում, նրանց 30 տոկոսը՝ գերազանց, իսկ 17 տոկոսը բավարար և վատ է զգում իրեն հանրակրթական դպրոցում:

Հարցված աշակերտների 67 տոկոսը հարմարավետ է զգում այն դասասենյակներում, որտեղ դաս են անցկացնում, նրանց 25 տոկոսը որոշ չափով է իրեն հարմարավետ զգում, իսկ 7 տոկոսը հարմարավետ չի զգում այն դասասենյակներում, որտեղ դաս են անցկացնում:

Շենքային պայմանների հարմարավետության և աշակերտների իրավունքների՝ այս առումով պաշտպանվածության բացահայտման համար նրանց տրվեցին հերթական հետևյալ հարցերը. ջեռուցվում է արդյոք դպրոցը, ըստ որի պարզվեց, որ դպրոցների մեծամասնությունը ջեռուցվում է (78 տոկոս), իսկ ըստ հարցված աշակերտների 22 տոկոսի դպրոցը ջեռուցվում է մասնակիորեն: Այնուհետև աշակերտներից պարզվեց, թե ինչպես են հագեցնում ծարավը դասերի ժամանակ: Պարզվեց, որ նրանց 31 տոկոսը գնում է ջուրը, 25-ական տոկոս հարցված աշակերտների օգտվում է դպրոցի բակի ցայտաղբյուրից կամ այլ բակերից ու տեղերից, նրանց 11 տոկոսը ջուրը բերում է տանից, իսկ 6 տոկոսն օգտվում է դպրոցի սանհանգույցից:

Հարցված բոլոր աշակերտներն անխտիր պատասխանեցին, որ իրենց դպրոցում կա համակարգչային սենյակ, ինչը բավականին ուրախալի է ոչ միայն այն առումով, որ դպրոցները հագեցած են համակարգիչներով, այլ որ աշակերտները տեղյակ են դրա


մասին: Հարցված աշակերտները հետևյալ հաճախականությամբ են օգտվում համակարգչային սենյակից.

- հաճախ-45 տոկոս,
- երբեմն-25 տոկոս,
- հազվադեպ-21 տոկոս,
- երբեք-7 տոկոս,
- թույլ չեն տալիս-2 տոկոս:

Պարզվում է, որ հարցված աշակերտների 3/4-րդը՝ 75 տոկոսը, ծանոթ է իր իրավունքներին, նրանց 20 տոկոսը մասնակի է ծանոթ իր իրավունքներին, և միայն 5 տոկոսն է, որ ծանոթ չի իրավունքներին:

Ի հակադրություն ուսուցիչների կարծիքների պարզվում է, որ աշակերտների ավելի շատ մասն է ծանոթ իր պարտականություններին, քան իրավունքներին՝ 88 տոկոս, 10 տոկոսը մասնակիորեն է ծանոթ իր պարտականություններին, և միայն 2 տոկոսը ծանոթ չէ իր աշակերտական պարտականություններին, ինչպես ներկայացված է գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4. Աշակերտները ծանոթ են իրենց իրավունքներին ու պարտականություններին (%).



Սակայն հաճախ աշակերտները շփոթում են իրավունքն ու պարտականությունը՝ դրանք նույնականացնելով միմյանց: Այսպես, իրավունքներին ծանոթ լինելուց հետո հարց տրվեց նրանց թվարկել առնվազն 2 իրավունք: Դրանք դասակարգված են ըստ նվազման կարգի՝ սկսած ամենից հաճախ հնչածից.

- սովորելու, կրթվելու իրավունք,
- ազատ արտահայտել սեփական կարծիքը,
- լսել ուսուցչին,
- դասերը սովորել,

- օգտվել բուժ.կետից,
- լիովին օգտագործել դասամիջոցը,
- մասնակցել դպրոցի միջոցառումներին,
- ազատ ժամանակ օգտվել դպրոցի մարզասրահից,
- սնվելու իրավունք,
- բողոքել գնահատականի համար:

Ինչպես նկատվում է, աշակերտների կողմից արտահայտած իրավունքների շարքում կան պարտականություններ, որոնք նրանց կողմից ընկալվում են որպես իրավունք:

Իրավունքների մասին հարցված աշակերտների ուղիղ կեսը տեղեկացել է դասղեկից, նրանց 40 տոկոսը ծանոթացել է հասարակագիտության դասաժամից, իսկ մնացածը ծանոթացել են տարբեր աղբյուրներից, ինչպիսիք են՝ դասարանի պատին փակցված պաստառից, ինտերնետից, աշակերտական խորհրդից և այլն:

Այնուհետև հարց տրվեց աշակերտներին, թե օգտվում են արդյոք իրենց դպրոցի իրավունքի անկյունից: Պարզվեց, որ նրանց 38 տոկոսը երբեմն օգտվում է իրավունքի անկյունից, 28 տոկոսն օգտվում է պարբերաբար, նրանց 18 տոկոսը չի օգտվում իրավունքի անկյունից, 10 տոկոսը տեղյակ չի, թե այդպիսի անկյուն կա իրենց դպրոցում, թե ոչ և հարցվածների 6 տոկոսը նշել է, որ չունեն իրավունքի անկյուն դպրոցում:

Սակայն, եթե աշակերտները միանշանակ չեն օգտվում իրավունքի անկյունից կամ չգիտեն դրա առկայության մասին, ապա նրանց մեծամասնությունը՝ 95 տոկոսը, տեղյակ է, որ իր դպրոցում կա աշակերտական խորհուրդ: Թե որոնք են վերջինիս սկզբունքներն ու գործառույթները, գուցե նրանք լավ տեղեկացված չեն, բայց գիտեն ու լսել են վերջինիս գոյության մասին: Նրանց միայն 4 տոկոսը նշեց, որ տեղյակ չի կա արդյոք աշակերտական խորհուրդ, թե ոչ, իսկ 1 տոկոսն էլ նշեց, որ չկա այդպիսին:


Ինչ վերաբերում է աշակերտների պարտականություններին, ապա այստեղ աշակերտներն, իրոք, նշել էին ավել շատ տարբերակներ: Դրանք նույնպես ներկայացված են ըստ նվազման կարգի՝ սկսած ամենից հաճախ հնչածից.

- դասերին գալ պատրաստված,
- հարգել ուսուցչին,
- չուշանալ դասերից,
- ներկա լինել դասերին/չբացակայել դասերից,
- լինել կարգապահ,
- չխոսել դասի ժամին,
- խնամքով վերաբերվել դպրոցի գույքին,
- յուրացնել ուսուցչի ասածները,
- ծանոն չծանել,
- դասամիջոցներին չվազել,
- կռիվ չանել, չկռվել դպրոցում,
- հազնվել պատշաճ՝ սև և սպիտակ:

Ինչպես երևում է, աշակերտները քիչ թե շատ տեղյակ են իրենց պարտականություններին, այլ բան է, թե նրանց հետևում են դրանց, թե ոչ:

Չետաքրքիր է, երբ աշակերտին հարց է հղվում, թե երբևէ պատժել են իրենց դպրոցում: Նրանց 59 տոկոսը պատասխանեց, որ ոչ, իրեն չեն պատժել դպրոցում, 32 տոկոսն անկեղծացավ, որ իրեն պատժել են դպրոցում, իսկ 9 տոկոսը չէր հիշում, թե իրեն պատժել են, թե ոչ, որը սակայն խուսափողական պատասխան էր, քանի որ այդ տարբերակը նշող աշակերտների մեծամասնությունը հաջորդ` պատժամիջոցների ենթարկված լինելու վերաբերյալ հարցում նշել էին տարբերակներ: Իսկ թե ինչպիսի պատժամիջոցների են ենթարկվել հարցված աշակերտները, որևում է գծապատկեր 5-ում:

**Գծապատկեր 5. Ինչպիսի պատժամիջոցների են աշակերտները երբևէ ենթարկվել դպրոցում (%).**




Աշակերտները հնարավորություն ունեին նշել մեկից ավել տարբերակներ, ուստի այստեղ ևս տարբերակների ստացած ցուցանիշների գումարը մեծ է 100-ից:

Եթե աշակերտներից ոմանք կարող է որոշ չափով թաքցնեին իրենց նկատմամբ կիրառված պատիժները, ապա նրանք ազատ պատասխանել են այն հարցին, թե իրենց դասընկերները երբևէ պատժվել են դպրոցում: Այսպես, նրանց 89 տոկոսը պատասխանել է, որ գիտեն դասընկերների պատժման դեպքեր դպրոցում, նրանց 7 տոկոսը պատասխանել է, որ իր դասընկերները երբևէ չի պատժվել դպրոցում, իսկ 4 տոկոսը չգիտի նման դեպքերի մասին:

Պատժված աշակերտների մեծամասնությունը պատժվել է ուսուցչի կողմից` 79 տոկոս, այնուհետև տնօրենի կողմից` 20 տոկոս: Իսկ մնացածը պատժվել են փոխտնօրենի, դասղեկի, ուրիշ աշակերտների և դռնապանի կողմից:

Դասընկերների պատժամիջոցների ենթարկվելու վերաբերյալ հարցը նույնպես շատ ավելին պարզեց, քան պատժամիջոցների ենթարկվելու սեփական փորձը: Այն ներկայացված է գծապատկեր 6-ում:

**Գծապատկեր 6. Ինչպիսի պատժամիջոցների են ենթարկվել հարցված աշակերտների դասընկերները դպրոցում (%).**



Ինչպես նկատվում է վերոնշյալ երկու գծապատկերների միջև առկա են որոշ տարբերություններ, ինչը վկայում է, որ աշակերտներն ավելի շատ ներկայացրել են իրենց դասընկերների փորձը, քան իրենցը:

Այնուհետև աշակերտներից փորձ արվեց պարզելու, թե ըստ իրենց ուսուցիչները բոլոր աշակերտներին հավասար են պատժում: Պատասխանները բաշխվեցին հետևյալ կերպ.

- այո-29 տոկոս,
- հիմնականում այո-34 տոկոս,
- հիմնականում ոչ-18 տոկոս,
- ոչ-19 տոկոս:

Ընդհանրացնելով «այո» և «հիմնականում այո» տարբերակները՝ կարելի է նշել, որ հարցված աշակերտների մեծամասնության կարծիքով ուսուցիչները հավասար են


վերաբերվում և պատժում աշակերտներին: Իսկ թե ինչու որոշները և հատկապես ովքեր չեն պատժվում, աշակերտները պատասխանեցին հետևյալ կերպ.

- հարցվածների 18 տոկոսի կարծիքով ուսուցչի երեխաներն են, որ չեն պատժվում ուսուցիչների կողմից,
- 21 տոկոսի կարծիքով ուսուցչի սիրելիները չեն պատժվում,
- 24 տոկոսը կարծում է, որ չեն պատժվում այն աշակերտները, որոնք լրացուցիչ պարապում են այդ ուսուցչի մոտ,
- 20 տոկոսն էլ կարծում է, որ հարուստի երեխա են, դրա համար չեն պատժվում ուսուցիչների կողմից:

Հատկանշական է, որ այս հարցի պատասխանների մեջ տարբերություն կար՝ կապված հարցված աշակերտի տարիքից: Այսպես, ավելի շատ բարձր դասարանների աշակերտներն էին տեսնում անհավասարություն, և հատկապես նրանք են նշել «լրացուցիչ պարապում են այդ ուսուցչի մոտ» տարբերակը, որը հավանաբար պայմանավորված է նրանով, որ արդեն ավագ դպրոցի աշակերտները պրացուցիչ պարապում են ԲՈՒՀ-երի համար:

Իսկ թե ինչ է բռնությունն ընդհանրապես աշակերտի հանդեպ, աշակերտներն ունեն բռնության երևույթի վերաբերյալ հետևյալ ընկալումը.

**Գծապատկեր 7. Ինչ է բռնությունն աշակերտի հանդեպ (%).**



Ինչպես երևում է գծապատկերից, աշակերտների համար բռնությունն առաջին հերթին նույնականացվում է ծեծի, այնուհետև՝ ապտակի հետ:

Եվ վերջում, հարց տրվեց աշակերտներին, թե կկիրառեին իրենք պատժամիջոցներ աշակերտների հանդեպ, եթե լինեին ուսուցիչ: Այդ պատասխանները բաշխվեցին հետևյալ կերպ.



- այո, հաճախ-4 տոկոս,
- երբեմն-26 տոկոս,
- հազվադեպ-28 տոկոս,
- ոչ-19 տոկոս,
- չգիտեմ/դժվարացել է պատասխանել-հարցվողների 23 տոկոսը:

Հատկանշական է, որ ուսուցիչ լինելու դեպքում պատիժ կիրառողների մեջ ավելի շատ բռնության ենթարկված աշակերտներն են, որոնք հիմնականում տղաներ են:

## **Ծնողների հետ անցկացված հարցումներ**

Ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր դպրոցի աշակերտների ծնողների հետ անցկացվել է մեկական ֆոկուս խմբային քննարկում, որտեղ նույնպես բարձրացվել է երեխաների նկատմամբ բռնությունների կիրառման խնդիրը դպրոցներում:

Ըստ ծնողների մեծամասնության իրենց երեխաները հիմնականում հաճույքով են գնում դպրոց: Նրանց մի մասը՝ հիմնականում աղջիկները, պատմում են իրենց մայրերին դպրոցում իրենց փոխհարաբերությունների մասին, որոնք վերաբերում են ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների հետ ձևավորված հարաբերություններին: Սակայն տղա աշակերտներն այդքան էլ չեն կիսվում դպրոցում իրենց ունեցած փոխհարաբերությունների և դեպքերի մասին, ինչը որոշ չափով բնական է հատկապես բարձր դասարանների տղա աշակերտների համար, չնայած նրան, որ ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցում էին հիմնականում մայրի ծնողներ:

Ըստ հարցված ծնողների իրենց երեխաների նկատմամբ խիստ կամ կոպիտ ֆիզիկական բռնությունների հետքեր իրենք չեն նկատել, դրանք հիմանականում եղել են ավելի շատ հոգեբանական բռնությունների տեսքով, ինչը ծնողները նկատել են երեխայի ունեցած տրամադրությունից, վարքից, երբ որոշ չափով երեխան դարձել է ինքնամոլի, նյարդային կամ ագրեսիվ: Երեխաների հետ կապված խնդիրների մասին ծնողներն ավելի շատ տեղեկանում են դասղեկներից: Նրանցից շատերը դպրոց են գնում միայն ծնողական ժողովներին, այն էլ՝ ստիպված:

Սակայն ծնողներից ոմանց մոտ նշվեցին նաև տեսակետներ, որ իրենք երբեմն արդարացնում են որոշ պատժամիջոցների կիրառումը և դեմ չեն, որ ուսուցիչները դաստիարակելու նպատակով երբեմն պատժեն իրենց երեխաներին, քանի որ նույնիսկ իրենք անզոր են, իհարկե, ոչ ֆիզիկական բռնություն գործադրելով:

## Հիմնական արդյունքների ամփոփում

Այս բաժնում ամփոփված են աշակերտների իրավունքների խախտման ու մասնավորապես նրանց նկատմամբ բռնությունների ու ճնշումների վերաբերյալ Արմավիրի մարզի դպրոցներում իրականացված մոնիտորինգի հիմնական արդյունքները:

*Դպրոցներում կրթական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը.*

- Արմավիրի 11 դպրոցների շենքային պայմանները բավարարում են նորմալ կրթական գործընթաց կազմակերպելու համար:
- Դպրոցներից գրեթե կեսում՝ նախասրահներում, առկա են իրավունքի անկյուններ:
- Դպրոցներում բացակայում են առաջարկությունների ու բողոքների արկղեր:
- Ուսումնասիրված դպրոցների դասասենյակներից շատ քչերում են առկա աշակերտի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ պաստառներ:
- Բոլոր դպրոցներում առկա են մարզադահլիճներ, որոնք հիմնականում գործում են և ջեռուցվում, սակայն ոչ բոլոր մարզադահլիճներին կից կան հագուստի կախիչներով հանդերձարաններ:
- Բոլոր դպրոցներում առկա են համակարգչային սենյակներ, որոնք հազեցած են անհրաժեշտ հիմնական սարքավորումներով:
- Բժշկական կետեր նույնպես առկա են բոլոր դպրոցներում, որոնք գործում են և ջեռուցվում, սակայն հազեցած են միայն նվազագույն բժշկական սարքավորումներով ու գույքով:
- Սանիտարական հանգույցներում ամենաքիչն են պահպանված հաստատված կանոնները: Դրանցում առկա զուգարանակոնքերի և լվացարանների թիվը չի համապատասխանում դպրոցներում սովորող աղջիկների և տղաների թվին, ինչպես նաև սան.հանգույցների մեծամասնությունն ապահովված չէ հոսող ջրով:

*Դպրոցների տնօրենների կարծիքները*

- Դպրոցների տնօրենները աշակերտների կարգապահությունը գնահատում են լավ:
- Տնօրեններն ու ուսուցիչները երբեմն են ստիպված լինում պատժել աշակերտներին:

- Որպես պատժամիջոց՝ տնօրենները չեն կիրառում ոչ մի բռնություն, այլ ունենում են աշակերտների հետ զրույցներ:
- Ուսուցիչները որպես պատժամիջոց կիրառում են դասղեկների միջամտությունը, ծնողներին իրազեկումն ու դիտողությունը, նախատինքը:
- Դպրոցների ծնողների հավաստմամբ աշակերտների ծնողները չեն բողոքում իրենց երեխաների նկատմամբ կիրառված պատիժների առթիվ:
- Աշակերտների և ուսուցիչների միջև հազվադեպ են առաջանում խնդիրներ կամ կոնֆլիկտներ:
- Աշակերտները հիմնականում ծանոթ են իրենց իրավունքներին ու պարտականություններին:
- Ուսուցիչներն ամբողջովին ծանոթ են իրենց իրավունքներին ու պարտականություններին:
- Դպրոցներում գործում են աշակերտական խորհուրդներ:

#### *Հարցված ուսուցիչների կարծիքները*

- Հարցված ուսուցիչների մեծամասնությունը աշակերտների ընդհանուր կարգապահությունը գնահատում է բավարար:
- Ուսուցիչների և աշակերտների միջև հազվադեպ են խնդիրներ առաջանում դպրոցում:
- Հարցված ուսուցիչները երբեք ստիպված չեն լինում պատժել աշակերտներին:
- Սակայն նրանց գործընկերները երբեմն ստիպված են լինում պատժել աշակերտներին:
- Հարցված ուսուցիչներն ու իրենց գործընկերները որպես պատժամիջոց աշակերտների նկատմամբ հիմնականում կիրառում են՝ *նախատինք, դիտողություն, ծնողի իրազեկում, դասղեկի միջամտություն, անբավարար գնահատական*, իսկ առավել քիչ կիրառում են՝ դասարանից դուրս հրավիրել, ականջ ուլորել, ապտակել:
- Աշակերտների ծնողները տեղեկանում են իրենց երեխաների նկատմամբ կիրառված պատժամիջոցների մասին, սակայն չեն բողոքում այդ փաստերի առթիվ:
- Իսկ ընդհանրապես, ըստ ուսուցիչների, աշակերտների և ծնողների կողմից չեն եղել բռնությունների վերաբերյալ բողոքներ:

- Ուսուցիչները կարծում են, որ աշակերտներն առավել շատ ծանոթ են իրենց իրավունքներին և ոչ թե պարտականություններին:
- Որպես ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների բարելավման ամենաարդյունավետ միջոց ուսուցիչները համարել են յուրաքանչյուր ուսուցչի և աշակերտի կողմից սեփական իրավունքների ու պարտականությունների իմացությունն ու կիրարկումը:

### *Հարցված աշակերտների կարծիքները*

- Հարցված աշակերտների մեծամասնությունն իրեն լավ և հարմարավետ է զգում դպրոցում ու դասասենյակում, որտեղ դաս են անցկացնում:
- Աշակերտների մեծամասնությունը հաճախ է օգտվում համակարգչային սենյակից, որոնք առկա են բոլոր ուսումնասիրված դպրոցներում:
- Աշակերտների մեծամասնությունը ծանոթ է իր իրավունքներին ու պարտականություններին:
- Առավել շատ աշակերտները ծանոթ են իրենց կրթություն ստանալու և սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքներին:
- Իսկ պարտականություններից ամենից շատ աշակերտները գիտեն դասերին պատրաստ գալու, դասերից չուշանալու և ուսուցչին հարգելու իրենց պարտականությունները:
- Իրավունքների մասին աշակերտները հիմնականում տեղեկանում են դասղեկից, այնուհետև՝ հասարակագիտության դասաժամից:
- Աշակերտների մեծամասնությունը տեղյակ է, որ դպրոցում կա աշակերտական խորհուրդ:
- Նրանց միայն մի մասն է օգտվում դպրոցում առկա իրավունքի անկյունից:
- Աշակերտների մեծամասնությունը չի ենթարկվել պատժամիջոցների ուսուցիչների կողմից, սակայն նրանց դասընկերների մեծամասնությունը պատժվել է ուսուցիչների կողմից:
- Աշակերտների նկատմամբ կիրառված հիմնական պատժամիջոցներն են՝ ***ծնող կանչելը, դասարանից դուրս հրավիրելը, անբավարար գնահատական նշանակելը, վիրավորանքը, անկյուն կանգնեցնելը***: Առավել քիչ նրանց ապտակում են, ոլորում ականջը և ծեծում:
- Աշակերտների մեծամասնությունը պատժվում է ուսուցիչների, այնուհետև՝ դպրոցի տնօրենի կողմից:

- Ըստ աշակերտների ուսուցիչները հիմնականում հավասար են վերաբերվում աշակերտների պատժելիս:
- Իսկ ոչ հավասար վերաբերվում են այն աշակերտներին, որոնք լրացուցիչ պարապում են տվյալ ուսուցչի մոտ:
- Աշակերտների ընկալմամբ բռնությունն աշակերտի հանդեպ առաջին հերթին ***ծեծն է***, այնուհետև՝ ***ապտակը, վիրավորանքը, ամոթանք տալը, անբավարար գնահատական նշանակելը, անկյուն կանգնեցնելը***:
- Աշակերտների մեծամասնությունը հազվադեպ կկիրառեր պատժամիջոցներ աշակերտների հանդեպ, եթե լիներ ուսուցիչ:

### *Հարցված ծնողների կարծիքները*

- Ըստ ծնողների մեծամասնության իրենց երեխաները հիմնականում հաճույքով են գնում դպրոց:
- Նրանց մի մասը՝ հիմնականում աղջիկները, պատմում են իրենց մայրերին դպրոցում իրենց փոխհարաբերությունների մասին, որոնք վերաբերում են ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների հետ ձևավորված հարաբերություններին:
- Երեխաների նկատմամբ խիստ կամ կոպիտ ֆիզիկական բռնությունների հետքեր ծնողները չեն նկատել, դրանք հիմնականում եղել են ավելի շատ հոգեբանական բռնությունների տեսքով:
- Երեխաների հետ կապված խնդիրների մասին ծնողներն ավելի շատ տեղեկանում են դասղեկներից:
- Որոշ ծնողներ նշեցին տեսակետներ, որ իրենք երբեմն արդարացնում են որոշ պատժամիջոցների կիրառումը և դեմ չեն, որ ուսուցիչները դաստիարակելու նպատակով երբեմն պատժեն իրենց երեխաներին:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Արմավիրի մարզի հանրակրթական հաստատություններում աշակերտների իրավունքների պաշտպանվածության ուսումնասիրությանն ուղղված մոնիտորինգի

արդյունքները վերլուծելով կարելի է եզրակացնել, որ թեև կան մի շարք օրենքներ երեխայի իրավունքների պաշպանության մասին, սակայն մեր հասարակության մեջ դրանք հաճախ չեն կիրառվում: Վերջիններիս հետ կապված վեր հանված խնդիրներն են.

- Ուսուցիչները, աշակերտներն ու ծնողները մասամբ են իրազեկ երեխայի իրավունքներից, և չկան հստակ մշակված մեխանիզմներ, որոնք պարբերաբար կիրազեկեն ուսուցիչների, երեխաների և ծնողների իրավունքների, դպրոցում ունեցած պարտականությունների ու գործառույթների մասին:
- Երեխաների նկատմամբ դպրոցում կիրառվում են հիմնականում հոգեբանական բռնություններ, երբեմն նաև` ֆիզիկական, որոնք կրում են պարբերական բնույթ և հաճախ համարվում են դաստիարակության ձև կամ զսպման միջոց:
- Դպրոցում բացակայում են հոգեբաններ, որոնք պարբերաբար կկազմակերպեն բացատրական և հոգեբանական զրույցներ, որոնք էլ իրենց հերթին կնպաստեն դպրոցում կոնֆլիկտների նվազեցմանը:
- Դպրոցներում չեն գործում երեխաների իրավունքների, նրանց շահերի պաշտպանությամբ զբաղվող կառույցներ. աշակերտական խորհուրդները ավելի շատ ֆորմալ բնույթ են կրում:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը` ԱԶԿ ՀԿ-ն առաջարկում է.

- Ակտիվացնել դպրոցի խորհրդատվական մարմինների գործունեությունը` նպատակ հետապնդելով մշակելու մեխանիզմներ, որոնք կիրազեկեն ուսուցիչներին, աշակերտներին և ծնողներին դպրոցում իրենց իրավունքների և պարտականությունների մասին:
- Բոլոր դպրոցներում փակցնել իրավունքներին և պարտականություններին վերաբերող պաստառներ:
- Դպրոցներում տեղադրել առաջարկությունների և բողոքների արկղեր:
- Դպրոցները համալրել հոգեբաններով:
- Ուժեղացնել վերահսկողությունը համապատասխան մարմինների կողմից աշակերտների նկատմամբ խտրական վերաբերմունք դրսևորելու դեպքում:
- Բռնություններ կիրառելու դեպքում ուսուցչին ենթարկել պատասխանատվության:
- Նման մոնիտորինգներ իրականացնել պարբերաբար, դրանք ունենում են իրենց դրական ազդեցությունները:

## ՀԱԿԵԿԱԾ

Աշակերտների շրջանում անցկացված հարցումներ

	Հարցեր	Պատասխաններ	Տոկոսային ցուցանիշ (%)
1.	<b>Ինչպե՞ս ես քեզ զգում դպրոցում:</b>	Գերազանց	30
		Լավ	53

		Բավարար	16
		Վատ	1
2.	<b>Քեզ հարմարավե՞տ ես զգում այն դասասենյակներում, որտեղ դաս եք անցկացնում:</b>	Այո	67
		Որոշ չափով	25
		Ոչ	7
3.	<b>Ինչպե՞ս ես հագեցնում ծարավդ դասերի ժամին:</b>	Օգտվում եմ դպրոցի բակի ցայտադբյուրից	25
		Չեմ օգտվում	31
		Բերում եմ տանից	11
		Օգտվում եմ սանհանգույցից	6
		Օգտվում եմ այլ տեղերից, բակերից	25
		Այլ	2
4.	<b>Կա՞ արդյոք ձեր դպրոցում համակարգչային սենյակ:</b>	Այո	100
		Ոչ	0
		Չգիտեմ	0
5.	<b>Եթե այո, ապա օգտվում ես այնտեղից:</b>	Հաճախ	45
		Երբեմն	25
		Հազվադեպ	21
		Երբեք	7
		Թույլ չեմ տալիս	2
6.	<b>Ծանոթ ես արդյոք քո իրավունքներին:</b>	Այո	75
		Մասնակի	20
		Ոչ	5
7.	<b>Ինչպե՞ս ես ծանոթացել աշակերտների իրավունքներին:</b>	Դասղեկն է ծանոթացրել	50
		Այլ դպրոցականներից	2
		Հասարակագիտության դասաժամից	40
		Ծանոթ չեմ	5
		Այլ -	5
8.	<b>Օգտվում ես արդյոք իրավունքի անկյունից:</b>	Այո	28
		Երբեմն	38
		Ոչ	18
		Չունենք իրավունքի անկյուն	6
		Տեղյակ չեմ, այդպիսի անկյուն կա մեր դպրոցում	10
9.	<b>Կա՞ արդյոք ձեր դպրոցում աշակերտական խորհուրդ:</b>	Այո	95
		Ոչ	1
		Տեղյակ չեմ	4
10.	<b>Գիտե՞ս, թե ինչ պարտականություններ ունի աշակերտը:</b>	Այո	88
		Ոչ	10
		Տեղյակ չեմ	2
11.	<b>Քեզ երբևէ պատժե՞լ են դպրոցում:</b>	Այո	32
		Ոչ	59
		Չեմ հիշում	9
12.	<b>Ինչպիսի՞ պատժամիջոցի ես երբևէ ենթարկվել:</b>	Ծեծ	5
		Վիրավորանք	19
		Անկյուն կանգնեցել	11
		Դասարանից դուրս հրավիրել	22
		Ապտակել	8
		Անբավարար գնահատական նշանակել	21
		Ծնող կանչել	23
		Ականջ ոլորել	4
	Չեմ ենթարկվել	50	

13.	<b>Իսկ քո դասընկերները երբևէ պատժվե՞լ են դպրոցում:</b>	Այո	89
		Ոչ	7
		Զգիտեմ	4
14.	<b>Եթե այո, ապա ու՞մ կողմից:</b>	Տնօրենի	20
		Ուսուցչի	79
		Դռնապանի	4
		Ուրիշ աշակերտների	4
		Այլ /փոխտնօրեն, դասուցիչ	2
15.	<b>Ինչպիսի՞ պատժամիջոցների ենթարկվում ես քո դասընկերները:</b>	Ծեծ	21
		Վիրավորանք	45
		Անկյուն կանգնեցել	25
		Դասարանից դուրս հրավիրել	65
		Ապտակել	20
		Անբավարար գնահատական նշանակել	52
		Այլ-	3
		Չեն ենթարկվում	7
16.	<b>Քո կարծիքով ուսուցիչները բոլոր աշակերտներին հավասա՞ր են պատժում:</b>	Այո	29
		Հիմնականում այո	34
		Հիմնականում ոչ	18
		Ոչ	19
17.	<b>Իսկ ինչու՞ որոշները/և ովքեր չեն պատժվում:</b>	Ուսուցչի երեխա են	18
		Ուսուցչի սիրելին են	21
		Լրացուցիչ պարապում են այդ ուսուցչի մոտ	24
		Հարուստի երեխա են	20
18.	<b>Ո՞րն է ըստ քեզ բռնություն աշակերտի հանդեպ:</b>	Ծեծ	77
		Վիրավորանք	40
		Ծնող կանչել	10
		Անկյուն կանգնեցնել	21
		Անբավարար գնահատական նշանակել	25
		Ապտակել	57
		Դուրս հրավիրել դասարանից	18
		Ամոթանք տալ	29
		Նշված բոլորը	5
		Ոչ մեկը	7
19.	<b>Եթե դու լինեիր ուսուցիչ, կկիրառեիր՞ պատժամիջոցներ աշակերտների հանդեպ:</b>	Այո, հաճախ	4
		Երբեմն	26
		Հազվադեպ	28
		Ոչ	19
		չգիտեմ	23
20.	<b>Հարցվողի սեռը</b>	Արական	39
		Իգական	61

**Ուսուցիչների շրջանում անցկացված հարցումներ**

	Հարցեր	Պատասխաններ	Տոկոսային ցուցանիշ (%)
1.	<b>Ինչպիսի՞ն է աշակերտների կարգապահությունը:</b>	Գերազանց	2
		Լավ	45
		Բավարար	49
		Անբավարար	2
		Դժվարանում եմ պատասխանել	2



2.	<b>Ի՞նչ հաճախականությամբ են խնդիրներ առաջանում Ձեր և աշակերտների միջև:</b>	Հաճախ	2
		Երբեմն	11
		Հազվադեպ	58
		Երբեք	29
3.	<b>Հաճա՞խ եք ստիպված լինում պատժել աշակերտներին:</b>	Այո	0
		Երբեմն	43
		Ոչ	57
4.	<b>Իսկ Ձեր գործընկերները հաճա՞խ են ստիպված լինում պատժել աշակերտներին:</b>	Այո	7
		Երբեմն	73
		Ոչ	20
5.	<b>Ի՞նչ պատժամիջոցներ եք հիմնականում կիրառում աշակերտների նկատմամբ:</b>	Անբավարար գնահատական	11
		Դաստիարակչական միջամտություն	28
		Ծնողի իրազեկում	54
		Նախատիևք, դիտողություն	56
		Դասարանից դուրս հրավիրել	4
		Ապտակել	0
		Ականջը ոլորել	1
		Ծեծել	0
		Չեմ կիրառում	12
6.	<b>Իսկ Ձեր գործընկերները հիմնականում ի՞նչ պատժամիջոցներ են կիրառում:</b>	Անբավարար գնահատական	27
		Դաստիարակչական միջամտություն	53
		Ծնողի իրազեկում	45
		Նախատիևք, դիտողություն	51
		Դասարանից դուրս հրավիրել	15
		Ապտակել	2
		Ականջը ոլորել	4
		Ծեծել	2
		Չեն կիրառում	1
Զգիտեմ	17		
7.	<b>Աշակերտների ծնողներն իմանու՞մ են կիրառված պատիժների մասին:</b>	Այո	68
		Ոչ	5
		Չգիտեմ	27
8.	<b>Եթե իմանում են, ապա ո՞վ է տեղեկացնում նրանց այդ մասին:</b>	Աշակերտը	14
		Դաստիարակ	60
		Դասընկերը	3
		Ուսուցիչը	12
		չգիտեմ	18
9.	<b>Բողոքու՞մ են արդյոք ծնողներն այդ փաստի առթիվ:</b>	Այո	2
		Ավելի շուտ այո	3
		Ավելի շուտ ոչ	35
		Ոչ	43
		Չգիտեմ	17
10.	<b>Իսկ ընդհանրապես եղե՞լ են բռնությունների վերաբերյալ աշակերտների կամ ծնողների կողմից:</b>	Այո	4
		Երբեմն	14
		Ոչ	64
		Չգիտեմ	18
11.	<b>Ըստ Ձեզ, աշակերտները ծանո՞թ են իրենց իրավունքներին:</b>	Այո	58
		Մասնակի	35
		Ոչ	4
		Չգիտեմ	3
12.	<b>Ըստ Ձեզ, աշակերտները</b>	Այո	42

	<b>ծանոթ են իրենց պարտականություններին:</b>	Մասնակի	45
		Ոչ	10
		Չգիտեմ	3
13.	<b>Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների բարելավման միջոցների արդյունավետության գնահատումը 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 1–ն ամենից քիչ արդյունավետն է, իսկ 5–ը՝ ամենաարդյունավետը:</b>	Աշակերտների կրթական մակարդակի բարձրացում	3,4 միավոր
		Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների կանոնակարգի մշակում և ներդրում	3,1 միավոր
		Վարքագծի կանոնների մշակում և ներդրում	3,6 միավոր
		Յուրաքանչյուրն իմանա իր իրավունքներն ու պարտականությունները	4,1 միավոր